



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

25.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-ԱՄ-2017/24

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/27-1/10929-17 գրությունով Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.06.2017թ. թիվ 03/27-1/10929-17 գրությամբ խորհրդում նախաձեռնել է Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Վահրամ Հակոբյան Ա/Զ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Վահրամ Հակոբյան Ա/Զ-ն 27.07.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Վահրամ Հակոբյան Ա/Զ-ի կողմից կատարվում են ճշտումներ՝ իր նախկինում ներկայացրած հաշվետվությունը և կատարած վճարումները ճշտելու վերաբերյալ:

Ամփոփելով, Վահրամ Հակոբյան Ա/Զ-ն խնդրել է Խորհրդին՝ վերը նշված գործընթացը ավարտին հասցնելու համար, որը կարող է էական նշանակություն ունենալ քննվող գործի համար, իրեն տալ ողջամիտ ժամկետ ճշտման գործընթացը ավարտին հասցնելու համար, սակայն Խորհուրդն արձանագրում է, որ վերջինս որոշումը կայացնելու օրվա դրությամբ Խորհրդին դիրքորոշում չի ներկայացրել:

Վահրամ Հակոբյան Ա/Զ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 07.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.06.2017թ. թիվ 03/27-1/10929-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար «Գրենական պիտույքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊԶԲ-15/3-15/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի՝ միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 07.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊԶԲ-15/3-15/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Վահրամ Հակոբյան Ա/Զ-ն, ով Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 13-14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև Պատվիրատուն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար

տեղ զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների ստուգման նպատակով, որին ի պատասխան՝ ստացվել է եզրակացություն համաձայն որի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի հիման վրա Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

4. ՍՑ-ԱՍ-2017/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՍ-2017/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար «Գրենական պիտույքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊԶԲ-15/3-15/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **18.03.2017թ.** հայտ է ներկայացրել:

2. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 13-14-րդ չափաբաժինների մասով Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե 1-

ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 04.04.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.04.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **18.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 395 487 ՀՀ դրամի չափով:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը, մերժել է Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի հայտը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/27-1/10929-17 գրությունը՝ կից փաստաթղթերով և Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի 27.07.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող**

մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ **մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:**

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ

եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպես, Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար «Գրենական պիտույքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ-15/3-15/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **18.03.2017թ.** հայտ է ներկայացրել:

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 04.04.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.04.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **18.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 395 487 ՀՀ դրամի չափով:**

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, մինչդեռ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և

հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Միևնույն ժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **վերջինիս վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից խախտումը

թույլ տալու օրվանից՝ 18.03.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/27-13/10929-17 գրությամբ ներկայացված Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/27-1/10929-17 գրությամբ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 35087389) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՇԵՐ ԱՆԱՆՅԱՆ